

ՀՌՉԱԿԱԳԻՐ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ

Իրական ժողովրդավարական ընտրությունները երկրի բնակչությանը պատկանող ինքնիշխան իրավունքների դրսևորումն է, որի ազատ կամաարտահայտումն ընկած է իշխանության իրավասությունների և լիզիտիմության հիմքում: Մարդու հանրաճանաչ իրավունքներից է պարբերական, իրական ժողովրդավարական ընտրությունների ընթացքում քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքը: Իրական ժողովրդավարական ընտրությունները ծառայում են երկրում քաղաքական իշխանության համար պայքարի խաղաղ լուծմանը, այդ իսկ պատճառով կարևոր նշանակություն ունեն խաղաղության և կայունության պահպանման գործում: Այն երկրներում, որտեղ կառավարությունն ընտրվում է օրինական ճանապարհով՝ իրական ժողովրդավարական ընտրությունների միջոցով, սահմանափակ է ոտնձգությունների հանրավորությունները իշխանության նկատմամբ:

Ժողովրդավարության դրսևորման անհրաժեշտ պայմաններից մեկն իրական ժողովրդավարական ընտրություններն են, որովհետև դրանք են ներկայացնում այն մեխանիզմը, որի օգնությամբ երկրի բնակչությունն օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի հիման վրա, ազատ արտահայտում է իր կամքն այն հարցի վերաբերյալ, թե ով ունի օրինական իրավունք իր անունից ու շահերից իրականացնել իշխանական լիազորություններ: Իրական ժողովրդավարական ընտրությունների ապահովումն ավելի լայն գործընթացների հաստատմանն ու ժողովրդավարական կառավարման հաստատությունների ստեղծմանն ուղղված ջանքերի մասն է: Չնայած, որ ընտրական բոլոր գործընթացներում պետք է արտացոլվեն իրական ժողովրդավարական ընտրությունների համակողմանի սկզբունքները, ոչ մի ընտրություն չի կարելի դիտարկել անցկացման վայրի քաղաքական և պատմա-մշակութային պայմաններից առանձին:

Չեն կարող լինել իրական ժողովրդավարական ընտրություններ, մշտապես չապահովելով մարդու հիմնարար իրավունքներն ու ազատություններն՝ առանց ռասայական, մաշկի գույնի, սեռի, լեզվի,

դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագումի, գույքային դրությունի, դասային դիրքի կամ այլ սոցիալական կարգավիճակի՝ ներառյալ հաշմանդամությունը, խտրական, կամայական և անհիմն այլ սահմանափակումների: Այս իրավունքները, մարդու մյուս իրավունքներն ու ժողովրդավարությունը չեն կարող ապահովվել առանց օրենսդրական երաշխիքների: Այս հիմնարար կանոնները ամրագրվել են մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերում և միջազգային այլ համաձայնագրերում, ինչպես նաև բազմաթիվ միջկառավարական կազմակերպությունների փաստաթղթերում: Այսպիսով, իրական ժողովրդավարական ընտրությունների ապահովումը մտահոգության առարկա է միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև ազգային հաստատությունների, քաղաքական պայքարի մասնակիցների, քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների համար:

Ընտրությունների միջազգային դիտարկումն արտահայտում է միջազգային հանրության հետաքրքրությունը՝ ժողովրդավարական ընտրությունների նկատմամբ, որպես ժողովրդավարության զարգացման մի մաս, ներառելով հարգանքը մարդու իրավունքների նկատմամբ և իրավունքի գերակայությունը: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների շեշտադրմամբ ընտրությունների միջազգային դիտարկումը՝ մարդու իրավունքների միջազգային դիտարկման մաս է և պետք է իրականացվի քաղաքական պայքարի ազգային մասնակիցների հանդեպ անկողմնակալության չափանիշների պահպանմամբ և դրա անցկացման ընթացքում չպետք է հաշվի առնվեն երկիմաստ կամ բազիմաստ կարծիքներ, որոնք կարող են հակասել անկողմնակալության պահպանմանը: Այն ապահովում է ընտրական գործընթացների գնահատումը՝ իրական ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար միջազգային սկզբունքներին և ազգային օրենսդրությանը համապատասխան, միաժամանակ ելնելով նրանից, որ ի վերջո երկրի բնակչությունն է որոշում ընտրական գործընթացների լեգիտիմությանը և վստահությունը դրա արդյունքների նկատմամբ:

Ընտրությունների միջազգային դիտարկումը կարող է բարձրացնել ընտրական գործընթացների հանդեպ հեղինակությունը՝ խախտումներն ու կեղծիքները բացառելու և հրապարակայնությունն ապահովելու, ինչպես նաև

ընտրական գործընթացների բարելավման վերաբերյալ հանձնարարականներ տալու միջոցով: Այն կարող է նպաստել հասարակության վստահության բարձրացմանը՝ որտեղ կա դրա անհրաժեշտությունը, ընտրողների ակտիվ մասնակցությանը և մեղմացնել ընտրությունների հետ կապված վեճերի ծագման համար հնարավոր գործոնները: Այն նաև նպատակ ունի փորձի, իրազեկման և տեղեկատվության փոխանակման միջոցով ժողովրդավարության զարգացումը բարձրացնել միջազգային մակարդակի:

Ընտրությունների միջազգային դիտարկումը լայն ընդունում է ստացել ամբողջ աշխարհում և կարևոր դեր է խաղում ընտրական գործընթացների ճիշտ և անկողմակալ գնահատման ապահովման գործում: Ընտրությունների մանրակրկիտ և անկողմանակալ միջազգային դիտարկումը պահանջում է վստահելի մեթոդների առկայություն և համագործակցություն՝ իշխանության ազգային մարմինների, քաղաքական պայքարի ազգային մասնակիցների /քաղաքական կուսակուցությունների, թեկնածուների և հանրաքվեի անցկացման հարցով համախոհների/, ընտրությունները դիտարկող ազգային կազմակերպությունների և միջազգային այլ վստահելի կազմակերպությունների և այլոց հետ:

Այս կապակցությամբ սույն Հռչակագրին և դրան կից՝ Ընտրություններին միջազգային դիտորդների Վարվելակերպի Օրենսգրքին հավանություն տվող միջկառավարական և միջազգային ոչկառավարական կազմակերպությունները համատեղ հայտարարում են հետևյալը.

1. Իրական ժողովրդավարական ընտրությունները երկրի բնակչությանը պատկանող ինքնիշխան իրավունքների դրսևորումն է, որի ազատ կամաարտահայտումն ընկած է իշխանության իրավասությունների և լեգիտիմության հիմքում: Մարդու հանրաճանաչ իրավունքներից է պարբերական, իրական ժողովրդավարական ընտրությունների ընթացքում քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքը: Իրական ժողովրդավարական ընտրությունները կարևոր նշանակություն ունեն խաղաղության և կայունության պահպանման և կառավարման ժողովրդավարական մանդատի տրամադրման գործում:

2. Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագրի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Համաձայնագրի, այլ միջազգային համաձայնագրերի համաձայն՝ յուրաքանչյուր մարդ ունի իր երկրի պետական և հասարակական գործերին մասնակցելու իրավունք, որի հնարավորությունը՝ մարդու իրավունքների միջազգային սկզբունքների համաձայն, պետք է ապահովվի առանց որևէ խտրականությունների և անհիմն սահմանափակումների: Այս իրավունքը կարող է իրականացվել անմիջականորեն՝ հանրաքվեների մասնակցելու, ընտրովի պաշտոններում առաջադրվելու կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով:

3. Կառավարության լիազորությունների հիմքում ընկած է երկրի բնակչության կամքը, որը պետք է արտահայտվի իրական պարբերական ընտրություններում՝ ազատ քվեարկելու և գաղտնի քվեարկությամբ ընդհանուր ու հավասար կամաարտահայտման միջոցով, արդար կերպով ընտրվելու երաշխավարված իրավունքներով ու հնարավորություններով, կամ ազատ քվեարկության համանման ընթացակարգով՝ քվեարկության արդյունքները ճշգրիտ հաշվարկելու, հայատարարելու ու դրանք հարգելու պայմաններում: Դրան համապատասխան, իրական ժողովրդավարական ընտրությունների ապահովումը ենթադրում է իրավունքների և ազատությունների, ընթացակարգերի, օրենքների և ինստիտուտների համագործակցության մի ամբողջ շարք:

4. Ընտրությունների միջազգային դիտարկումը ենթադրում է՝ ընտրությունների անցկացմանը վերաբերող օրենքների, գործընթացների ու ինստիտուտների և ընդհանրապես ընտրությունների անցկացման հետ կապված այլ գործոնների մասին պարբերական, համակողմանի և մանրակրկիտ տեղեկությունների հավաքում, նմանատիպ տեղեկությունների օբյեկտիվ և որակյալ վերլուծություն և ընտրությունների բնույթի հետ կապված եզրահանգումների արտահայտում, որը պետք է հիմնված լինի տեղեկատվության հավաստիության ու օբյեկտիվ վերլուծության հետ կապված ամենաբարձր չափանիշների վրա: Ընտրությունների միջազգային

դիտարկումների շրջանակներում, հնարավորության դեպքում, անհրաժեշտ է ներկայացնել առաջարկություններ ընտրությունների և դրանց հետ առնչվող գործընթացների հեղինակության և արդյունավետության վերաբերյալ, չմիջամտելով նմանատիպ գործընթացներին և չխանազարելով դրանց կատարմանը: Ընտրությունների դիտարկման միջազգային առաքելությունները՝ միջկառավարական և միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների ու ասոցիացիաների համատեղ ջանքերն են, որի նպատակն ընտրությունների միջազգային դատարկումների իրականացումն է:

5. Ընտրությունների միջազգային դիտարկումն ապահովում է ընտրությունների գնահատումը մինչև ընտրությունների անցկացումը, անցկացման օրը և դրանից հետո ընկած ժամանակահատվածում՝ բազմակողմանի, երկրաժամկետ դիտարկման հիման վրա՝ տարբեր մեթոդների կիրառմամբ: Այդ ջանքերի շրջանակներում դիտարկում իրականացնող մասնագիտացված առաքելությունները կարող են ուսումնասիրել մինչ ընտրությունները և ընտրություններից հետո ընկած ժամանակահատվածի հետ կապված որոշ հարցեր և կոնկրետ գործընթացներ /ինչպիսիք են՝ ընտրատարածքների սահմանումը, ընտրողների գրանցումը, էլեկտրոնային տեխնոլոգիաների և գործող այլ մեխանիզմների կիրառումը, ընտրությունների անցկացման հետ կապված բողոքարկման ու բողոքների քննարկման կարգերը/: Դիտարկում իրականացնող մասնագիտացված առանձին առաքելություններ կարող են նաև գործել այն պայմանով, որ նման առաքելությունները հանդես կգան հաստակ ձևակերպված հրապարակային հայտարարություններով, այն մասին, որ իրենց գործողությունները և դրանց արդյունքում արված եզրահանգումները սահմանափակվում են իրենց ոլորտի շրջանակով և այդպիսի սահմանափակ գործունեության հիման վրա նրանք ընտրությունների ընդհանուր գործընթացի վերաբերյալ եզրահանգումներ չեն անում: Բոլոր դիտորդական առաքելությունները պետք է ձեռք բերեն համաձայնություն այն մասին, որ քվեարկությունների օրը դիտարկվի ընտրությունների անցկացման ենթատեքստում, և որ քվեարկությունների օրն արված եզրահանգումների նշանակությունը չգերազանհատվի: Ընտրությունների միջազգային

դիտարկման շրջանակներում ուսումնասիրվում են նաև ընտրելու և ընտրվելու իրավունքի իրականացման, ներառյալ ընտրությունների մասնակցելու համար քաղաքական կամ այլ հայացքների, ռասայական պատկանելության, մաշկի գույնի, էթնիկական ծագման, լեզվի, դավանանքի, ազգային կամ սոցիալական ծագումի, գույքային դրության, դասային դիրքի կամ այլ սոցիալական` ասենք ֆիզիկական արատ ունեցող անձանց կարգավիճակի հիման վրա առկա խտրականությունների ու այլ ոտնձգությունների հետ կապված պայմանները:

Ընտրությունների դիտարկման միջազգային առաքելությունների եզրահանգումները, ըստ էության, հանդիսանում են ընդհանուր հենակետ ընտրությունների նկատմամբ հետաքրքրություն դրսևորող բոլոր անձանց, այդ թվում քաղաքական պայքարի մասնակիցների համար: Դա կարող է էական նշանակություն ունենալ ընտրությունների արդյունքների վիճարկման ժամանակ, երբ օբյեկտիվ և հավաստի եզրահանգումները մեղմացնում են վեճերի ծագման համար պոտենցիալ գործոնները:

6. Ընտրությունների միջազգային դիտարկումն իրականացվում է ընտրություններ անցկացնող երկրի բնակչության և միջազգային հանրության շահերից ելնելով: Դիտարկումը որոշվում է ընտրությունների գործընթացով և չի առնչվում քվեարկության կոնկրետ արդյունքներին, այն ընտրությունների արդյունքներին առնչվում է կապված դրանք սահմանված կարգով և ժամկետներում` արդար և ճիշտ հայտարարելու հետ: Չի կարելի ընտրությունների միջազգային դիտարկման առաքելության կազմում ընդգրել մարդու, որն ունի որևէ քաղաքական, տնտեսական և այլ շահեր, որոնք կխանգարեն դիտարկման ընթացքում և / կամ ընտրությունների բնույթի մասին եզրահանգումներ անելիս պահպանել արդարությունն ու անկողմնակալությունը: Այս պայմանները պետք է պահպանվեն երկարաժամկետ դիտարկում իրականացնող դիտորդների կողմից ողջ ժամանակահատվածի ընթացքում, ինչպես նաև ընտրությունների անցկացման օրը` ավելի կարճ ժամկետով դիտարկման ընթացքում, հատկապես, որ այդ ժամանակահատվածներից յուրաքանչյուրը դիտորդների առաջ դնում է անկախ և օբյեկտիվ վերլուծություն անցկացնելու հստակ պայման: Ընտրությունների

դիտարկման միջազգային առաքելությունները չպետք է ընդունեն ֆինանսական կամ այլ նյութական օգնություն կառավարական մարմիններից, որտեղ դիտարկում են ընտրությունները, քանի որ դա կարող է առաջացնել շահերի էական բախում և խախտել վստահությունն առաքելության եզրահանգումների օբյեկտիվության հանդեպ: Ընտրությունների դիտարկման միջազգային պատվիրակությունները համապատասխան և հիմնավոր հարցում ստանալու դեպքում պետք է պատրաստ լինեն հրապարակելու տեղեկատվություն իրենց ֆինանսական աղբյուրների մասին:

7. Ընտրությունների դիտարկման միջազգային առաքելությունները պետք է հանրության համար ժամանակին թողարկեն հավաստի և անկողմնակալ հայտարարություն՝ ներկայացնելով իրենց եզրահանգումները, եզրակացությունները և համապատասխան հանձնարարականները, որոնք օգտակար կարող են լինել ընտրական գործընթացների կատարելագործման համար /այդ թվում՝ տրամադրեն դրանց պատճենները ընտրական մարմիններին և համապատասխան ազգային մյուս գերատեսչություններին/: Առաքելությունները պետք է հրապարակայնորեն հայտարարեն երկրում իրենց գտնվելու, այդ թվում իրենց մանդատի, կազմի և իրավասությունների ժամկետների մասին, անհրաժեշտության դեպքում ներկայացնեն ընթացիկ զեկույցներ և հրապարակեն նախնական հայտարարություն՝ ընտրությունների արդյունքների մասին և վերջնական զեկույց՝ ընտրական գործընթացի ավարտից հետո: Ընտրությունների դիտարկման միջազգային առաքելությունները կարող են անցկացնել անհատական հանդիպումներ, երկրում իրական ժամկետավարական ընտրություններ կազմակերպելու համար շահագրգիռ անձանց հետ՝ առաքելության եզրակացությունները, եզրահանգումները և հանձնարարականները քննարկելու նպատակով: Ընտրությունների դիտարկման միջազգային առաքելությունները կարող են նաև զեկույցներ ներկայացնել համապատասխան միջկառավարական կամ միջազգային ոչ կառավարական իրենց կազմակերպություններին:

8. Սույն Հռչակագրին և նրան կից ընտրություններին՝ միջազգային դիտորդի Վարվելակերպի Օրենսգրքին հավանություն տվող կազմակերպությունները պարտավորվում են համագործակցել միմյանց հետ՝ ընտրությունների միջազգային դիտորդների առաքելության շրջանակներում:

Ընտրությունների միջազգային դիտարկումը կարող է անցկացվել, օրինակ.

-առանձին միջազգային դիտորդի առաքելությամբ,

-համատեղ հատուկ միջազգային դիտարկման առաքելությամբ, կամ՝

-միասնական միջազգային դիտորդական առաքելությամբ:

Ցանկացած դեպքում Հռչակագրին և կից միջազգային դիտորդի Վարվելակերպի Օրենսգրքին հավանություն տվող կազմակերպությունները պարտավորվում են համատեղ աշխատել՝ ընտրություններին միջազգային դիտորդների մասնակցության առավել արդյունավետություն ապահովելու նպատակով:

9. Ընտրությունների միջազգային դիտարկումը պետք է իրականացվի՝ հարգելով տվյալ երկրի ինքնիշխանությունն ու բնակչության մարդու իրավունքները: Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները պետք է հարգեն ընդունող երկրի օրենքները, ինչպես նաև ցուցաբերեն հարգանք՝ իշխանության ազգային մարմինների նկատմամբ՝ ներառյալ ընտրական մարմինները և իրենց գործունեությունն իրականացնեն այնպես, որ այն համատեղելի լինի մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգանքի և խրախուսման հետ:

10. Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները պետք է ձգտեն ատկիվ համագործակցել ընդունող երկրի ընտրական մարմինների հետ և չպետք է խոչընդոտեն ընտրական գործընթացի իրականացմանը:

11. Որևէ կազմակերպության որոշում՝ միջազգային դիտորդական առաքելություն իրականացնելու կամ այդպիսի առաքելություն կազմակերպելու հանարավորության ուսումնասիրություն մասին, պարտադիր չէ, որ նշանակի, թե այդ կազմակերպությունն ընտրությունների գործընթացը և դրանց անցկացումը երկրում համարում է որպես վստահություն ներշնչող:

Ոչ մի կազմակերպություն չպետք է ուղարկի ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն մի երկիր՝ այնպիսի պայմաններում, երբ կա հավանականություն, որ նրա ներկայությունը կարող է համարվել ոչ ժողովրդավար ընտրությունների օրինականացում, և բոլոր նման պայմանների առկայության դեպքերում ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունը պետք է հրապարակավ հանդես գա հայտարարությամբ, որ իրենց ներկայությունը չենթադրվի որպես ընտրությունների օրինականացում:

12. Ընտրություններին միջազգային դիտորդական առաքելության բարեխիղճ և արդյունավետ աշխատանքի համար պետք է պահպանվեն որոշ հիմնարար պայմաններ: Դրաց համապատասխան, ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն կարող է կազմակերպվել միայն այն դեպքում, երբ երկիրը, որտեղ անցկացվում են ընտրությունները, ընդունում է հետևյալ միջոցները.

ա/ վաղօրոք հանդես է գալիս հրավերով կամ այլ կերպ արտահայտում է իր պատրաստակամությունն ընդունելու ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություններին, յուրաքանչյուր կազմակերպության պահանջներին համապատասխան, այն հաշվով, որ մինչ ընտրությունների անցկացումը լինի բավարար ժամանակ՝ իրական ժողովրդավարական ընտրություններ կազմակերպելու բոլոր գործընթացները հետազոտելու համար,

բ/ երաշխավորում է ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների անարգել հնարավորությունը՝ ուսումնասիրելու ընտրական գործընթացի բոլոր փուլերը և տեխնիկական միջոցները, այդ թվում էլեկտրոնային տեխնոլոգիաների և էլեկտրոնային քվեարկության արդյունքների հաստատման ընթացակարգին, ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություններից չպահանջելով համաձայնության գալ ընտրական գործընթացին կամ տեխնիկական միջոցներին վերաբերող հարցերի գաղտնիության կամ ինֆորմացիայի չհրապարակման համար և ընդունում է, որ ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները կարող են չընդունել կիրառվող տեխնիկական միջոցների հավաստիությունը,

գ/ երաշխավորում է անարգել մուտք՝ ընտրությունների գործընթացին մասնակից անձանց մոտ, ներառյալ՝

I ընտրական մարմինների բոլոր մակարդակների պաշտոնատար անձանց՝ հիմնավորված խնդրանքի հիման վրա,

II իշխանության օրենսդիր մարմնի անդամների, կառավարության ծառայողների և անվտանգության մարմինների աշխատակիցների, որոնց գործունեությունը վերաբերում է իրական ժողովրդավարական ընտրությունների կազմակերպմանը.

III քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների և անձանց, ովքեր ցանկություն են հայտնել մասնակցելու ընտրապայքարին (ներառյալ՝ ընտրություններին մասնակցելու թույլատրված, մասնակցելու չթույլատրված և մասնակցությունից հրաժարված թեկնածուների) կամ մասնակցելուց ձեռնպահ մնացած անձանց.

IV զանգվածային լրատվական միջոցների աշխատակիցների.

V երկրում իրական ժողովրդավարական ընտրությունների անցկացման ապահովման համար շահագրգիռ բոլոր կազմակերպությունների և անձանց.

դ/ երաշխավորում է ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության ազատ տեղաշարժը երկրում.

ե/ երաշխավորում է ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությանը՝ ազատ, առանց արտաքին միջամտության, ընտրությունների ընթացքի և իրադարձությունների վերաբերյալ եզրակացություններ և հայտարարություններ հրապարակելուն.

զ/ երաշխավորում է, որպեսզի կառավարության, անվտանգության և ընտրական մարմիններից և ոչ մեկը չմիջամտի առանձին դիտորդի կամ ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության անդամների ընտրության հարցում և չսահմանափակի նրանց թվաքանակը.

է/ երաշխավորում է դիտորդ կամ ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության այլ անդամ ընտրված անձանց լիարժեք հավատարմագրումը՝ երկրի ամբողջ տարածքում (տալիս է անձը հաստատող կամ ընտրությունների ընթացքին հետևելու համար փաստաթուղթ), այն

պայմանով, որ առաքելությունը կպահպանի հավատարմագրման համար հստակ սահմանված, հիմնավորված և չխտրականացված պահանջները.

ը/ երաշխավորում է, որ կառավարության, անվտանգության և ընտրական մարմիններից և ոչ մեկը չի միջամտի ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության գոծունեությանը.

թ/ երաշխավորում է, որ կառավարական ոչ մի մարմին ճնշում չի գործադրի, չի սպառնա՝ ձեռնարկելով միջոցներ, պատժամիջոցներ չի կիրառի իր երկրի կամ արտասահմանցի այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր աշխատում են ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության համար, ցուցաբերում օգնություն այդ աշխատանքներին կամ ընտրությունների վերաբերյալ ներկայացնում են տեղեկատվություն՝ միջազգային սկզբունքներին համապատասխան:

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների համար, որպես անհրաժեշտ պայման, դրանք իրականացնող միջկառավարական և միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները կարող են պահանջել նման երաշխիքների ամրագրում փոխըմբռնման հուշագրում կամ կառավարության և (կամ) ընտրական մարմինների հետ համաձայնեցված համանման փաստաթղթում:

Ընտրությունների դիտարկումը քաղաքացիական բնույթի գործունեություն է և նա կունենա կասկածելի օգտավետություն, եթե ընթանա բարձր ռիսկայնության պայմաններում կամ, եթե այլ կերպ սահմանափակվեն դիտորդական առաքելություն իրականացնելու մեթոդները:

13. Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները պետք է ձգտեն իրենց ներկայության համար հավանություն ստանալ և կարող են նման հավանություն պահանջել քաղաքական պայքարի բոլոր մասնակիցների կողմից:

14. Քաղաքական պայքարի մասնակիցները (կուսակցություններ, թեկնածուներ և հանրաքվեի դրված հարցերի կողմնակիցներ) ընտրությունների ընթացքում հետևում են իրենց օրինական հետաքրքրություններին, որը հիմնված է ընտրված լինելու և անմիջականորեն կառավարության

աշխատանքներին մասնակից լինելու իրավունքի վրա: Մրան համապատասխան, նրանք պետք է ունենան հնարավորություն վերահսկելու ընտրական գործընթացը, հետևելու ընթացակարգի պահպանմանը՝ ներառյալ ընտրական տեղամասերում էլեկտրոնային և այլ տեխնիկական միջոցների աշխատանքին, քվեարկության արդյունքների հաշվմանը՝ ընտրական կենտրոններում և ընտրությունների անցկացման այլ վայրերում, ինչպես նաև քվեաթերթիկների և ընտրական այլ փաստաթղթերի փոխադրմանը:

15. Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները պետք է՝

ա/ ընտրական գործընթացի շրջանակներում կապ հաստատեն քաղաքական պայքարի բոլոր մասնակիցների հետ, ներառյալ՝ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին, որոնք կարող են տեղեկատվություն տրամադրել ընտրությունների ընթացքի և որակի վերաբերյալ;

բ/ խրախուսեն ընտրական գործընթացին վերաբերող տեղեկատվություն ներկայացնելը, կատարեն այդ տեղեկատվության անկանխակալ և օբյեկտիվ գնահատում;

գ/ որպես ընտրությունների միջազգային դիտարկման կարևոր ասպեկտ, գնահատել քաղաքական պայքարի մասնակիցներին՝ անխտրականության հիման վրա տրվող հանրավորությունը՝ ընտրությունների ընթացքի բոլոր փուլերի և բոլոր տարրերի ամբողջական ստուգման համար:

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություններն իրենց եզրակացություններում, որոնք կարող են հրապարակվել գրավոր կամ ընտրական գործընթացի տարբեր փուլերում արտահայտվել այլ տեսքով, պետք է հանդես գան քաղաքական պայքարի մասնակիցների գործունեության անօրինական սահմանափակումների կամ արտաքին միջամտության վերացման համար, որպեսզի ապահովվի ընտրական գործընթացի ամբողջականությունը:

16. Քաղաքացիներն ունեն ազատ միավորվելու և իրենց երկրի պետական ու հասարակական գործերի վարմանը մասնակից լինելու միջազգայնորեն ճանաչված իրավունք: Այս իրավունքները կարող են իրականացվել ոչ կառավարական կամակերպությունների գործունեության հիման վրա,

վերահսկելով ընտրությունների հետ կապված գործընթացները և հետևելով ընթացակարգերի պահպանմանը, ներառյալ՝ ընտրությունների ընթացքում տեղամասային կենտրոններում և ընտրությունների անցկացման այլ վայրերում էլեկտրոնային և այլ տեխնիկական միջոցների աշխատանքը, տեղամասերում քվեարկության արդյունքների հաշվարկումը, ինչպես նաև քվեաթերթիկների և ընտրական այլ փաստաթղթերի տեղափոխումը:

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները պետք է կատարեն գնահատում և ներկայացնեն զեկույցներ ընտրություններին հետևող և ընտրական գործընթացները վերահսկող ազգային անկախ կազմակերպությունների՝ իրենց գործունեությունն անխտրական, առանց ապօրինությունների կամ արտաքին միջամտության ծավալելու հնարավորության վերաբերյալ: Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները պետք է պնդեն քաղաքացիների՝ ընտրություններին ազգային մակարդակով, առանց չհիմնավորված սահմանափակումների կամ արտաքին միջամտության անկողմնակալ դիտարկում իրականացնելու իրավունքը և իրենց զեկույցներում հանդես գան նման ցանկացած չարդարացված սահմանափակման կամ միջամտության դեմ:

17. Ընտրությունների դիտարկման միջազգային առաքելությունները պետք է հայտնաբերեն վստահություն ներշնչող ազգային կազմակերպություններին, որոնք անկողմնակալ կվերահսկեն ընտրությունները՝ պարբերականության սկզբունքով, կապ ստեղծելով և անհրաժեշտության դեպքում համագործակցելով նրանց հետ: Ընտրությունների ընթացքի վերաբերյալ նման կազմակերպությունների ներկայացրած տեղեկատվությունը պետք է խրախուսվի միջազգային դիտորդական առաքելության կողմից: Վերոհիշյալ կազմակերպությունների կողմից տեղեկատվության անկախ գնահատման անցկացումից հետո, նրանց եզրակացությունները կարող են դառնալ կարևոր լրացում ընտրությունների նկատմամբ դիտարկում իրականացնող միջազգային կազմակերպությունների եզրակացությունների համար, բայց դրա հետ մեկտեղ՝ ընտրությունների նկատմամբ դիտարկում իրականացնող միջազգային կազմակերպությունները պետք է պահպանեն իրենց անկախությունը: Դրան համապատասխան,

ընտրությունների նկատմամբ դիտարկում իրականացնող միջազգային կազմակերպությունները պետք է ներդնեն բոլոր ջանքերը, որպեսզի այդ կազմակերպությունների կողմից որևէ հայտարարության կամ հրապարակումից առաջ անցկացվեն համապատասխան խորհրդակցություններ:

18. Սույն Հռչակագրին հավանություն տվող միջկառավարական և միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները ընդունում են իրապես ժողովրդավարական ընտրությունների անցկացման հետ կապված կարգի, սկզբունքների և պարտավորությունների հաստատման գործում ձեռք բերված էական առաջընթացը և պարտավորություն են ստանձնում ընտրությունների դիտարկման սկզբունքները կիրառել ընտրական գործընթացի բնութագրման հետ կապված իրենց հայտարարությունների, որոշումների, պարզաբանումների և եզրակացությունների ժամանակ, ինչպես նաև պարտավորվում են ապահովել դիտորդական առաքելությունների գործունեության մեթոդների և սկզբունքների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունը:

19. Սույն Հռչակագրին հավանություն տվող միջկառավարական և միջազգային ոչ կառավարական կազմակերպություններն ընդունում են ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու բազմաթիվ վստահելի մեթոդների գոյությունը և պարտավորվում փոխանակել տեղեկատվություն իրենց մոտեցումների վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում համաձայնեցնել տարբեր մեթոդները: Նրանք ընդունում են նաև, որ միջազգային դիտորդական առաքելությունները պետք է բավականին մեծ լինեն, որպեսզի անկախության և անկողմնակալության հիմքի վրա որոշեն երկրում ընտրական գործընթացը, դրանք պետք է շարունակվեն բավական երկար ժամանակ, որպեսզի հնարավոր լինի բացահայտել ընտրական գործընթացը բնորոշող բոլոր կարևորագույն հատկանիշները՝ նախընտրական շրջանում, քվեարկության օրը և քվեարկությունից հետո ընկած ժամանակահատվածում, միայն թե դիտորդական գործունեությունը և ներկայացված նկատառումները չկենտրոնացվեն մեկ տարրի կամ ընտրական գործընթացում առկա սահմանափակ քանակի տարրերի վրա: Նրանք ընդունում են նաև, որ անհրաժեշտ է ընտրության օրը թույլ չտալ ընտրական գործընթացի առանձնացված դիտարկում, չուռճացնել

դրա նշանակությունը, և որ այդ դիտորդությունը պետք է ներառվի ընդհանուր ընտրական գործընթացի դիտարկման ենթատեքստի մեջ:

20. Սույն Հռչակագրին հավանություն տվող միջկառավարական և միջազգային ոչ կառավարական կազմակերպություններն ընդունում են, որ ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություններում պետք է ներառել մարդկանց, որոնք ունեն բազմազան քաղաքական և մասնագիտական հմտություններ, անբասիր համբավ, ապացուցել են իրենց ազնվությունը՝ ընտրությունների դիտարկման ընթացքում, հաշվի առնելով ընտրական գործընթացին, ընտրությունների անցկացման ընդհանուր սկզբունքներին, մարդու իրավունքների միջազգային չափանիշներին, համեմատական ընտրական իրավունքին, վարչարարության ընթացակարգին, քաղաքական գործընթացների համեմատական վերլուծությանը, համակարգիչների և այլ տեխնիկական միջոցների կիրառմանն ընտրական գործընթացում:

Սույն Հռչակագրին հավանություն տվող կազմակերպություններն ընդունում են նաև մասնակիցների, նաև ղեկավար կազմի հավասարակշռված մասնակցության նշանակությունը՝ միջազգային առաքելություններում ներառելով տարբեր երկրների քաղաքացիների:

21. Սույն Հռչակագրին հավանություն տվող միջկառավարական և միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները պարտավորվում են.

ա/ ապահովել միջազգային առաքելության բոլոր մասնակիցների իրազեկումը՝ ընտրությունների վերաբերյալ տեղեկատվության հավաստիության և որոշումների կայացման ժամանակ քաղաքական անկողմնակալ վերաբերմունքի մասին,

բ/ ներկայացնել փաստաթուղթ առաքելության շրջանակների կամ վերլուծական համանման փաստաթուղթ, որը պարզաբանում է առաքելության նպատակները,

գ/ ներկայացնել տեղեկատվություն՝ համապատասխան ազգային օրենքների և որոշումների, ընդհանուր քաղաքական իրադրության և այլ հարցերի վերաբերյալ,

դ/ դիտորդական առաքելություն իրականացնող բոլոր մասնակիցներին ուսուցանել գործադրվող մեթոդներին,

ե/ ընտրությունների դիտորդական առաքելություն իրականացնող բոլոր մասնակիցներից պահանջել՝ կարդալ և ստանձնել պարտավորություն պահպանելու առաջարկվող Հռչակագրին կից՝ Ընտրություններում միջազգային դիտորդների Վարվելակերպի Օրենսգիրքը, որտեղ կարող են կատարվել նրա բնույթի վրա չազդող փոփոխություններ, հաշվի առնելով կազմակերպության նպատակը, կամ ստանձնել պարտավորություն պահպանելու Վարվելակերպի նախորդ Օրենսգիրքը, որն էապես չի տարբերվում Վարվելակերպի առաջարկվող Օրենսգրքից:

22. Սույն Հռչակագրին հավանություն տվող միջկառավարական և միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները պարտավորվում են ներդնել բոլոր ջանքերը պահպանելու Հռչակագրի դրույթները և միջազգային դիտորդների Վարվելակերպի Օրենսգիրքը՝ ընտրությունների ընթացքում: Ամեն անգամ, երբ Հռչակագրին հավանություն տվող կազմակերպությունն անհրաժեշտ կհամարի հետ կանգնել Հռչակագրի դրույթներից կամ միջազգային դիտորդների Վարվելակերպի Օրենսգրքից, ընտրությունների դիտարկում իրականացնող կազմակերպությունը պետք է հրապարակավ ներկայացնի հայտարարություն և համապատասխան բացատրություն դրա կարևորության մասին և պատրաստ լինի համապատասխան հարցերի վերաբերյալ տալ բացատրություններ այն կազմակերպություններին, որոնք հավանություն են տվել սույն Հռչակագրին:

23. Սույն Հռչակագրին հավանություն տվող միջկառավարական կազմակերպությունները և միջազգային ոչ կառավարական կազմակերպություններն ընդունում են, որ կառավարությունների կողմից կարող են պատվիրակություններ ուղարկվել այլ երկրներ՝ ընտրությունները դիտարկելու համար և որ այլ կազմակերպություններ նույնպես կարող են ընտրությունները դիտարկել: Հռչակագրին հավանություն տվող կազմակերպությունները ողջունում են ցանկացած այդպիսի դիտորդների մասնակցություն, որոնք ժամանակավոր հիմունքներով համաձայնվում են ներկայացված դրույթներին և իրականացնում

դիտորդական առաքելություն՝ առաջնորդվելով միջազգային դիտորդների Վարվելակերպի Օրենսգրքով:

24. Սույն Հռչակագիրը և դրան կից՝ միջազգային դիտորդական առաքելություն իրականացնողների Վարվելակերպի Օրենսգրքն ընտրությունների ընթացքում կոչված են հանդես գալու տեխնիկական փաստաթղթերի դերում և այդ հարցերում չի պահանջվում քաղաքական մարմինների որոշում՝ դրան հավանություն տվող կազմակերպությունների կողմից /այնպիսիք, ինչպիսիք են՝ վեհաժողովները, ղեկավար խորհուրդները կամ տնօրենների խորհուրդը/, բայց միաժամանակ այդպիսի որոշումների ընդունումը ողջունելի է: Սույն Հռչակագիրը և նրան կից՝ ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն իրականացնողների Վարվելակերպի Օրենսգրքը բաց են այլ միջազգային և միջկառավարական կազմակերպությունների հավանության համար: Նրանց հավանությունը պետք է գրանցվի ՄԱԿ-ի ընտրությունների անցկացման աջակցության բաժնում:

Ընտրությունների ընթացքում միջազգային դիտորդների Վարվելակերպի Օրենսգիրք

Ընտրությունների միջազգային դիտարկումը մեծ ճանաչում ունի ամբողջ աշխարհում: Այն անցկացվում է միջկառավարական և միջազգային հասարակական կազմակերպությունների և ասոցիացիաների կողմից՝ ընտրությունների գործընթացի բնույթը անկողմնակալ և ճշգրիտ գնահատելու նպատակով՝ ի շահ այն երկրի բնակչության, որտեղ դրանք անցկացվում են և ի բարօրություն միջազգային հանրության: Հետևաբար, դրա իրականացումը հիմնականում պայմանավորված է ընտրությունների միջազգային դիտարկման հեղինակության ապահովմամբ և ընտրությունների այժմյան դիտորդական միջազգային առաքելության բոլոր մասնակիցները, ներառյալ երկարաժամկետ և կարճաժամկետ լիազորություններով օժտված դիտորդները, գնահատման պատվիրակության անդամները, դիտորդության մասնագիտացված խմբերը և առաքելության ղեկավարները, պետք է ստորագրեն սույն Վարվելակերպի Օրենսգիրքը և հետևեն դրա դրույթներին:

Անկախության իրավունքների և միջազգային նորմերի պահպանումը մարդու իրավունքների ոլորտում

Ընտրությունները երկրի բնակչությանը պատկանող ինքնիշխան իրավունքների դրսևորումն է, որի ազատ կամաարտահայտումն ընկած է իշխանության իրավասությունների և լիզիտիմության հիմքում: Քաղաքացիների ընտրելու և ընտրվելու իրավունքները՝ պարբերաբար տեղի ունեցող իրական ժողովրդավարական ընտրություններում մարդու միջազգայնորեն ճանաչված իրավունքներ են և դրանք պահանջում են մի շարք հիմնական իրավունքների և ազատությունների իրականացում: Դիտորդներն ընտրությունների ընթացքում պարտավոր են հարգել ընդունող երկրի անկախությունը, ինչպես նաև մարդու իրավունքները և նրա բնակչության հիմնական ազատությունները:

Երկրի օրենքների և ընտրական մարմինների լիազորությունների պահպանումը

Գիտորդները պարտավոր են հարգել ընդունող երկրի օրենքները և այն մարմինների լիազորությունները, որոնց վրա դրված է ընտրությունների գործընթացի ղեկավարման պատասխանատվությունը: Գիտորդները պարտավոր են հետևել երկրի կառավարման, անվտանգության և ընտրական մարմինների կողմից ստացված ցանկացած օրինական կարգադրություններին: Գիտորդները նաև պարտավոր են հարգանք ցուցաբերել ընտրական մարմինների պաշտոնատար անձանց և ազգային իշխանության մարմինների ներկայացուցիչների նկատմամբ: Գիտորդները պարտավոր են նշել այն դեպքերը, երբ օրենքները, կարգերը և կառավարության և/կամ ընտրական մարմինների պաշտոնատար անձնաց գործողությունները ստեղծում են ավելորդ դժվարություններ կամ արգելքներ ընտրություններին առնչվող իրավունքների իրականացման համար, որոնք երաշխավորված են սահմանադրությամբ, օրենքով և կիրառելի միջազգային համաձայնագրերով:

Ընտրությունների դիտորդական միջազգային առաքելության կազմակերպական միասնության պահպանումը

Գիտորդները պարտավոր են հարգել և պաշտպանել ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության կազմակերպչական միասնականությունը: Դա մասնավորապես, ենթադրում է սույն Վարվելակերպի Օրենսգրքի դրույթների, գրավոր տեսքով ցանկացած ուղեցույցների (ինչպիսիք են լիազորությունների շրջանակների և ղեկավարման սկզբունքների վերաբերյալ ուղեցույցները) և դիտորդական առաքելության ղեկավարության կողմից ստացված բանավոր ցուցումների պահպանումը: Գիտորդները պարտավոր են մասնակցել դիտորդական առաքելության կողմից անցկացվող հրահանգավորման համար անհրաժեշտ բոլոր միջոցառումներին, ուսումնական դասընթացներին և աշխատանքի արդյունքների վերաբերյալ խորհրդակցություններին, դիտորդական առաքելության ցուցումով ծանոթանալ ընտրական օրենքներին, կանոնակարգերին և այլ համապատասխան օրենսդրությանը և ճշգրտորեն պահպանել այն մեթոդները, որոնք կիրառվում են դիտորդական առաքելության կողմից: Գիտորդները պարտավոր են նաև դիտորդական առաքելության ղեկավարությանը տեղեկացնել

շահերի ցանկացած բախումների մասին, որոնք կարող են նրանց միջև ծագել և իրենց կողմից նկատված՝ առաքելության կազմում ընդգրկված այլ դիտորդների ոչ արժանավայել վարքագծի մասին:

Հաստատական աջակցություն քաղաքական անկողմակալությանը

Դիտորդները պարտավոր են հաստատական պահպանել քաղաքական անաչառություն, այդ թվում նաև ոչ աշխատանքային ժամերին: Նրանք պարտավոր են ընտրությունների ժամանակ զերծ մնալ արտահայտվելուց կամ ազգային իշխանության մարմինների, քաղաքական կուսակցությունների, թեկնածուների, հանրաքվեի դրված հարցերի կամ ցանկացած վիճելի հարցերի նկատմամբ նախապատվություն ցուցաբերելուց: Դիտորդները պարտավոր են զերծ մնալ ցանկացած գործունեությունից, որը կարող է դիտվել որպես նախապատվության ցուցաբերում ընդունող երկրի քաղաքական պայքարի մասնակիցներից մեկին կամ աջակցություն նրան՝ առավել ձեռնառու դիրքի ապահովման համար և, մասնավորապես, զերծ մնալ տարբեր տիպի նշաններ, գույներ, նշանաբաններ կրելուց և ցուցադրելուց, որոնք կարող են դիտվել որպես նախապատվություն, ինչպես նաև զերծ մնալ քաղաքական պայքարի մասնակցից որևէ բանի ընդունումից:

Ընտրությունների գործընթացին չխոչընդոտելը

Դիտորդները պարտավոր են արգելքներ չստեղծել ընտրությունների գործընթացի որևէ փուլում, ներառյալ նախընտրական գործընթացները, քվեարկությունը, հաշվարկը, քվեարկության արդյունքների ամփոփումը և քվեարկության օրվան հաջորդող գործընթացները: Դիտորդները կարող են, եթե դա արգելված չէ օրենքով, տեղում տեղեկացնել ընտրական մարմինների պաշտոնատար անձանց խախտումների, կեղծման դեպքերի և էական այլ խնդիրների մասին և դա պարտավոր են անել առանց ավելորդ արգելքներ ստեղծելու: Դիտորդները կարող են հարցերով դիմել ընտրական մարմինների պաշտոնատար անձանց, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին և ընտրական տեղամասերի այլ դիտորդներին, պատասխանել իրենց գործունեության վերաբերյալ հարցերին, պայմանով, որ իրենց գործողությունները չխոչընդոտեն ընտրությունների ընթացքին: Հարցերին պատասխանելիս

դիտորդները չպետք է ձգտեն ղեկավարել ընտրությունների ընթացքը: Գիտորդները կարող են հարցեր տալ ընտրողներին, պատասխանել նրանց հարցերին, բայց չեն կարող խնդրել նրանց ասել, թե որ թեկնածուի, կուսակցության կամ հանրաքվեի դրված հարցի որ կետի օգտին են նրանք քվեարկել:

Պատշաճ վկայականի ներկայացում

Գիտորդները կարող են երևացող տեղում կրել անձը հաստատող վկայական, որը տրամադրվում է նրանց ընտրությունների դիտորդական առաքելության կողմից, ինչպես նաև վկայական, որը պահանջվում է ազգային իշխանության մարմինների կողմից և պարտավոր են ներկայացնել այն ընտրական մարմինների պաշտոնական անձանց և ազգային իշխանության մարմինների այլ շահագրգիռ ներկայացուցիչներին՝ նրանց խնդրանքով:

Գիտարկման հավաստիության ապահովումը և պրոֆեսիոնալիզմի դրսևորումը եզրակացություններ կայացնելիս

Գիտորդները պարտավոր են ապահովել իրենց բոլոր դիտարկումների հավաստիությունը: Գիտարկումները պետք է լինեն ամբողջական՝ հաշվի առնելով ինչպես դրական, այնպես էլ բացասական գործոնները, տարբերություն դնելով էական և ոչ էական գործոնների միջև և հայտնաբերելով բնութագրիչ գծեր, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ընտրությունների ընթացքի որակի վրա: Գիտորդների դատողությունները պետք է բխեն տեղեկատվության ճշմարտությանը ներակայցվող ամենաբարձր պահանջներից և վերլուծության օբյեկտիվությունից՝ ընդգծելով տարբերությունները սուբյեկտիվ հղումների և օբյեկտիվ գործոնների միջև: Գիտորդները պարտավոր են հիմնավորել բոլոր եզրակացությունները փաստացի և ստուգման ենթակա նյութով և չկատարել վաղաժամ ենթադրություններ: Գիտորդները պարտավոր են նաև վարել տեղեկատվության փաստաթղթային հաշվառում այն տեղերի և դրանց արդյունքների մասին, որտեղ նրանք անց են կացրել դիտարկումներ, ինչպես նաև դիտորդական առաքելության պահանջներին համապատասխան այլ կարևոր տեղեկատվության հաշվառում և պարտավոր են ներկայացնել նման փաստաթուղթ առաքելությանը:

Մինչև առաքելության հայտարարության հրապարակումը հանրությանը և զանգվածային լրատվության միջոցներին կարծիք արտահայտելուց զերծ մնալը

Դիտորդները պարտավոր են զերծ մնալ զանգվածային լրատվության միջոցներին կամ հասարակությանը իրենց դիտարկումներին և եզրակացություններին առնչվող ցանկացած անձնական դիտողությունների արտահայտումից՝ մինչև դիտորդական առաքելության հայտարարությամբ հանդես գալը, եթե նրանք առաքելության ղեկավարության կողմից չեն ստացել կոնկրետ լիազորություններ: Դիտորդները կարող են բացատրություններ տալ դիտորդական առաքելության բնույթի, նրա գործունեության և այն այլ հարցերի շուրջ, որոնց մասին դիտորդական առաքելությունը հարկ կհամարի և պետք է հորդորեն զանգվածային լրատվության միջոցների աշխատակիցներին և այլ շահագրգիռ անձանց՝ հարցերով դիմել դիտորդական առաքելության կողմից այդ նպատակով նշանակված անձանց:

**Ընտրությունների ընթացքում միջազգային դիտորդների Վարվելակերպի
Օրենսգրքին կից պարտավորություններ**

Ես կարդացել և ծանոթացել եմ Վարվելակերպի Օրենսգրքին, որն ինձ էր տրամադրվել ընտրությունների դիտարկման առաքելության կողմից:

Ներկայումս պարտավորվում եմ ենթարկվել Վարվելակերպի Օրենսգրքին և իմ՝ որպես դիտորդի, գործունեությունը լիովին համապատասխանեցնել դրան:

Ես չունեմ ոչ քաղաքական, ոչ տնտեսական և ոչ էլ այլ բնույթի հետաքրքրությունների բախում, ինչը կարող է ազդել իմ՝ որպես անկախ դիտորդի հանդես գալու կարողությանը և Վարվելակերպի Օրենսգրքին ենթարկվելուն:

Ես անվերապահորեն պետք է պահպանեմ իմ քաղաքական անկախությունը: Ես պետք է դատողություններ անեմ՝ ելնելով ինֆորմացիայի ճշգրտության ամենաբարձր պահանջներից, ինչպես նաև վերլուծության օբյեկտիվությունից՝ առանձնացնելով օբյեկտիվ փաստերը սուբյեկտիվ հղումներից, և իմ եզրակացությունները պետք է հիմնավորեմ փաստացի և ստուգման ենթարկված նյութով:

Ես չպետք է խոչընդոտներ ստեղծեմ ընտրությունների ընթացքում: Ես պետք է հարգեմ ազգային օրենքները և ընտրական համակարգի պաշտոնատար անձանց լիազորությունները և հարգալից վերաբերվեմ՝ ազգային իշխանության ընտրական և այլ համակարգերին: Ես պետք է հարգեմ և խրախուսեմ մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները: Ես պետք է ենթարկվեմ անհրաժեշտ անձնական վարվելակերպի կանոններին, հարգանք ցուցաբերեմ ուրիշների հանդեպ՝ այդ թվում նաև նրբանկատորեն վերաբերվեմ ընդունող երկրի մշակույթին և ավանդույթներին, անձնական հարաբերություններում ցուցաբերեմ ողջամտություն և մշտապես, այդ թվում նաև աշխատանքից դուրս, պահվածքս համապատասխանեցնեմ պրոֆեսիոնալիզմի բարձր աստիճանին:

Ես պետք է պաշտպանեմ ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության կազմակերպական միասնականությունը և հետևեմ առաքելության ցուցումներին: Ես պետք է հաճախեմ բոլոր վերապատրաստումներին, ուսումնական կուրսերին և աշխատանքի արդյունքին վերաբերող խորհրդակցություններին, որոնց մասնակցությունը պահանջում է ընտրությունների

դիտարկման առաքելությունը և պետք է աջակցեն հայտարարությունների և գեկույցների նախապատրաստական աշխատանքներին՝ համապատասխան առաջադրանք ստանալու դեպքում: Ես պետք է գերծ մնամ սեփական դատողություններս՝ դիտարկման կամ եզրակացությունների վերաբերյալ հայտնել լրատվամիջոցներին կամ հասարակությանը՝ այնքան ժամանակ, մինչև ընտրությունների դիտորդական առաքելությունը հանդես կգա հայտարարությամբ, եթե առաքելության ղեկավարությունից չեմ ստացել այն կատարելու կոնկրետ լիազորություն:

Ստորագրություն

Անուն Ազգանուն

Ամսաթիվ